


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչկարիոյ համար  
 տարեկան 12 զր.  
 վեցամսեայ 6 »  
 Արտասահմանի  
 համար տարեկան 15 »  
 վեցամսեայ 8 »  
 Ամերիկայի համար  
 տարեկան 3 զր.  
 վեցամսեայ 1.50 »

Մանուցման տող առ  
 շին երեսին համար 40 ա.  
 իսկ վերջին երեսին հա-  
 մար 20 սանթիմ. երե-  
 քին աւելի անգամներու  
 համար 20 0/0 գնդ կըլ-  
 այ :

Վառնայի համար  
 ձեռքի 10 սանթիմ



ՆՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՂԵՐԱԿԱՆ

ԿԸՆԴՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նուսկի եւ դրամի դրկի  
 խմբագրութեան հաս-  
 ցիկն

Редакция на вѣстникѣ  
 „Иларжумъ“  
 Варна

Redaction du journal  
 „Char oum“  
 (Bulgarie) Yarna

Պոչկարիոյ համար  
 ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար  
 ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ լեզ-  
 արութիւն

ՇԱՐԹՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԸ

ԵՐԿՈՒ ՆՈՐ ԳՐՔԵՐ

Անցեալ տարվան վերջերում և այս տարվան սկիզբներում լոյս տեսան երկու գրքեր, արտասահմանում. մէկը Ակնունու «Իէպի կախի», արձակ, իսկ միւսը Սիւմանթոյի «Հայր գիտնոր» օտանաւորով :

Երկու գրքերն էլ փառաբանում են մաքառումը և մաքառող հային իրեն վրայ ծանրացող բռնութեան դէմ սիրուն ոգեւորութեամբ և լեզուով. հայ վերջին ժամանակների կեանքի տւած փաստերի հիման վրայ, ու բնականօրէն խիստ սահմանը որոշում Բաֆֆու շրջանի գրականութեան ուր հարւածվում էր հայ մաքառումից զուրկ լինելու ստոր յատկութիւնը և փառաբանվում ապագայում ստեղծվելիք մաքառումը և մաքառողները, որոնք այսօրվան ներկան են կազմում :

Իրերես մեր ներկայ գրականութեան մէջ այդպիսի օւրիշ երկու հատորներ չը գտնվեն. որոնք կարգաւորվ մենք կարող լինենք գալ օրոշ, յստակ եղբակացութեան թէ՛ մեր այսօրվան կեանքը բոլորովին տարբերվում է Բաֆֆուների ժամանակի կեանքից, ու մեր գրագէտների եւ ժողովրդի ստուար մասի համար Բաֆֆուականութիւնը եթէ ոչ ամբողջովին, գոնէ մեծ մասամբ անցեալի հարստութիւն միայն պէտք է համարել :

Ու այդ եղբակացութիւնը ի հարկէ յուսահատեցնող չէ, այլ ոգեւորող, որովհետեւ նրանով մենք պարզօրէն ըմբռնում ենք թէ՛ մենք յառաջադիմել ենք և մեր հայրերին ետ թողել. նրանք բռնութեան դէմ մաքառում էին քարոզում և երեւակայական մաքառողներ ստեղծում, իսկ մենք մաքառումը քարոզելով հանդերձ բարեբախտութիւնը ունինք եւ մաքառողներու ապստամբների մի փայլուն շարք սեսնել, նրանց կեանքն ու գործերը զգալ, իրապէս շոշափելիօրէն ոգեւորվել :

Բաֆֆու մի Ասլան, Գիւգիւկչեան, Կարօ, Ֆահրաա եւայլն երեւակայական մաքառող հերոսները, աւելի բարձրացած Բաֆֆու արտակարգ վառվառն երեւակայութեամբ, այսօր որչափ նսեմանում են մեր իրական Վաղգէնների, Պետոնների, Բաբկէնների, Մուրաւանների և Ջաքարեանների գիմաց :

Հապա ժողովուրդը Բաֆֆինքը ժողովրդի մասին այնքան թոյլ կարծիք ունէին, որ նրանք իրենց երեւակայութեամբ իսկ չը կարողացան ստեղծել ժողովրդի մաքառում, Ասլանների ու Կարօների կողքին. թերեւս ղեկավարվելով այն սխալ մտքից, որ Կարօները կստեղծեն և իրանց հետեւող ժողովուրդը որը և կստեղծէ յոնեթիմ մէջ երազված Հայաստանը :

Այսօր մի շարք փայլուն գիւցաղնօրէն մաքառողների կողքին մենք տեսնում ենք և ժողովուրդ, Սասուն, Տարօն և ամբողջ կովկաս, որոնք Բաֆֆու իրէալ տիպերին ստիպում են իրենց ետեւից ընթանալ գէպի ազատութեան Գողգոթան :

Ու նոր հրատարակուած այս երկու գրքերը, «Իէպի կախ», և «Հայր գիտնոր» արանց կարելի է Աւելցնել և Յարլանեանի Դիւցաղնօրէնը, գալիս են մեր եւ Բաֆֆու ժամանակի հայ կեանքի տարբերութիւնը շեշտելու ու Բաֆֆուական ուղղութեան վերջտալու մեր գրականութեան մէջ, որը այլեւս գժւար թէ նիւթ տայ հայ ապստամբած մտքին և եւուանդին :

Այն տեղ ուր իրականութիւնն է թաղաւորում, արտայայտված կորովի և գեղեցիկ կերպով, երեւակայութիւնը եւ լալկանութիւնը կեանք չունի : Այն գրականութեան մէջ, ուր ժողովրդի կեանքի ողբալի և յուսահատական կողմերի դէմ ծառանում են նրա խրոզտ և բուռն ժեստերը բացարձակօրէն լալկան ուղղութիւնը չի կարող երկարատեւ թաղաւորել, որքան էլ որ նա ժողովրդի

չատ ճնշված ու ստրկացած խաւերում, որոնք ամեն ժողովրդի մեծամասնութիւն են կազմում, տիրապետող հանդիսանալ առժամապէս :

Մեր լալկան ուղղութեամբ, նոյն իսկ ամենաժողովրդական, գրագէտները պարտաւոր են այս ճրջմարտութիւնը աչքի առջեւ ունենալ և եթէ լալկանութիւնը իրենց համար բնածին չէ, այլ ստացական, մեծ վարպետ Բաֆֆուց ժաւանգած, շտապեն, ճիգեր թափեն իրենց վրայից թօթափելու այդ ժաւանգութիւնը, որը թէև շատ փայլալի ու գնահատելի է, բայց ներկայումս աւելորդ, յաճախ թէ ընթերցողներին եւ թէ իրենց համար վնասակար :

ՎԱՐՊՈ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

(Արտասահմանում հրատարակվող ուսու «Ժիզն» ամսագրից)

(Շար. Ասխուրդ թիւեկ)

70 թւականների հայ ժաւանգականների գործունէութիւնը հայ նորագոյն պատմութեան մի ոսկեայ էջն է կազմում, Համեստ, պատիւ, փառք եւ զիբք չը փնտոզ երիտասարդները թափանցեցին ամենահառ անկիւնները խաւարի եւ տգիտութեան դէմ մաքառելու եւ ազգային վերածնութեան ու ազատութեան պայծառ գաղափարները տարածելու համար :

Մանաւանդ ուշադրութիւն գործվեց ուսումնարաններ բանալու վրայ : Դիւրին գործ չէր առանց ոչինչի դըպրոցներ ստեղծել. յաճախ գիւղական տգէտ ժողովուրդը առարկում էր նետեւեալ ձեւով. — դպրոցը չէ կարող շտկել բեռնված եւ թաղված էջին : Բայց համոզումների ուժը և գործով գեւորված լինելը յաղթեց բոլոր արգելքները ու արգիւնքը այն եղաւ որ գիւղերում իրարու հետեւից սկսեցին բացվել դպրոցներ, որոնք կառավարվում էին հասարակութեան ընտրած հոգաբարձուներով և հասարակութեան հաշուով, ու այդ գործի ըսկզբից տէրախնդրի ճնշումը բոլորովին վերացվեց :

Ննորհիւ այդ շարժման կրթութիւնը թափանցեց եւ գիւղերը ու այդ ժամանակի գրագէտները համակ-

րութիւն գտան ոչ միայն քաղաքացի բնակչութեան այլեւ գիւղացիների միջեւ : Գրագէտները ետանգով ուսումնասիրում էին Տաճկահայաստանի պայմանները եւ իրենց ընթերցողներին ծանօթացնում թուրք բունակալութեան հետ, որին ստիպված են իրարկված եւ տաճկահայերը :

«Մշակ» թերթը, հիմնված Գրիգոր Արծրունիից 70 թւականի սկիզբներում, իր շուրջը հաւաքեց մի խումբ երիտասարդ գրագէտներ, որոնց շրնորհիւ մի կողմից ձաղկում էր հայ կեանքի վերքերը, միւս կողմից լայնօրէն ուսումնասիրվում նրա տնտեսական կացութիւնը :

Այդ ամէնը կողմաստիպելի մէջ արթնացան հետաքրքրութիւն եւ ցաւակցութիւն գէպի իրենց ճնշված տաճկահայ եղբայրները :

Արծրունին նշանակելի անձնաւորութիւն էր մեր վերջին 50 տարվան գործիչների մէջ, նրա անհատնում եւանդը եւ խորապէս բմբռնումը ժողովրդային կարիքների գրաւեցին ժողովրդային բոլոր խաւերի համակրութիւնը եւ սէրը հատարակ արհեստարարների եւ աշխատաւորների, որոնք մեղմում ընդհանուր աճումով մշակ են կոչվում :

Շնորհիւ Արծրունու ետանգին լըրապիբը, որը առաջ միայն ութ աշխատակիցներ ունէր, ժամանակի ընթացքում գրաւեց ընթերցողների մի շատ մեծ շրջան, որովհետեւ մտնում էր ամէն մի մութ անկիւն եւ սկսվող վերածնութեան ոգեւորութիւնը տարածում : Մեր ժողովուրդը շնորհիւ «Մշակի» սովորեց կարգաւ եւ մասնաւոր գոհունակութեամբ հետաքրքրվել ժողովրդի կեանքին վերաբերող ամէն բանով :

Ժողովրդին սիրելի Արծրունու թաղումը տեղի ունեցաւ 1892 թւականին եւ վերածվեց մի հրաշալի քաղաքական ցոյցի : Նրա համակրողներից բաղկացած 50 հոգաբար հոգիւնոց ամբոխը, հակառակ իշխանութեան արգելքի, որը փողոցները լցրել էր հոգակներով եւ ոստիկաններով, Արծրունու դագաղը տարաւ գլխուտը փողոցով, ուր գտնվում է կառավար չապետի պալատը : Կոզակները եւ ոստիկանների սրերին ամբոխը նպատասխանեց քարէ կարկուտով : Կոզակները չը կարողացան դիմանալ ամբոխի գրոհին եւ Արծրունու աճիւնը յաղթականօրէն տարվեցաւ : Այդ գէպը ու մասնաւորապէս աչքի բնական թիֆլիզի յանդուգն կիստօները : Ի հարկէ այդ գրամայի վերջը միայն ձերբակալութիւնը կը լինէր :

Այդպիսով Արծրունու անկենդանի տեսան հայերի թէև դեռ ոչ բոլորովին որոշ, քաղաքական վերածնութեան նշանները

Ներկայումս «Մշակը» ընկել է եւ վերածվել սովորական, հասարակ բորժուական լրագրի: Արծրունին կարողացաւ իր շուրջը հաւաքել երիտասարդ եւ տաղանդաւոր գրագէտներին, որոնք կարողանում էին ծառայել ժողովրդի լուսաւորութեան և արթնեցնում քաղաքական կեանքը, «Մշակ»-ում սկսվեցին հրատարակվել տաղանդաւոր Ռաֆֆիի վէպերը, որոնցում մեծ մասամբ նկարագրվում էր թրքահայի կեանքը եւ բացայայտ կերպով քարոզվում թուրք կռուականութեան դէմ:

«Կայծերը» նկարագրում է մի խումբ երիտասարդ հայ յեղափոխականների յաջող կռիւր թուրք կռուականութեան դէմ:

«Խենթի» հրատարակումը նկարագրում է ներկայումս շուրջը շարժումը իր անկախական վարչութեամբ համալսարաններով, մուզէյներով եւ գործարաններով, «Ջլիլախանի» հետոսը անխնայորէն ձեռնարկում է իր հօրը, թիւրքերից վիրաւորված եւ մեռնելիս, անթուամ է նրան եւ ամբողջ հին սերունդը որը չէր յանդգնում զինք վերցնել ինքնապաշտպանութեան եւ ազատութեան համար:

Բանաստեղծ Գամառ-Քաթիւնի երգում է ազատ եւ հրաշա թնութեամբ Հայաստանը, նրա Արաքսի և Երզնուքը յիշեցնում է Հայաստանի անցեալ ազատութիւնը, երբ Արաքսը իր ալիքներով ուրախացնում էր ազատ հային իսկ այժմ սղում է հայի գերութիւնը, որովհետեւ իր կանանց զաշտերով եւ անտաններով ծածկված օփերի վրայ այժմ թուրքը իր նամակն է կատարում:

Ազատութեան այս երգիչների հեղինակութիւնները «Մշակ» Հայաստանի հետ միասին դարձան հայի, մանաւանդ արհեստաւոր հայի ազատութեան աւետարանը եւ թանկահարկ

գին գարգը իրենց խղճուկ բնակարաններին:

(Շարունակելի)

«ՄԵՆՔ ԳԱՂՏՆԻ ԿՐ ԳՈՐԾԵՆԲ»

(Շար. Ասխուրդ Երեմի եւ վերջ)

Բայց ո՞ր է ձեր գաղտնի գործերը, երբ Սուլթանը, այսինքն ձեր գարաւոր թշնամին ամէն բան գիտէ եւ տեղեկ է ձեր բոլոր շարժումներէն, ու յարկէ գաղտնի կողմէ պահել:

Ինչու այդպէս կրօնս պարուն, Սուլթանը ձեր ո՞ր շարժումներն է որ տեղեկ է, ոչ, բնաւ երբէք ան չի գիտեր և կամ չի կրնար գիտնայ թէ մենք ինչ գործ կընենք իր երկրին մէջ:

Ինչպէս չգիտեր, թէ եւ այսօր դուք կոտէք թէ գաղտնի կը գործէք, սակայն ձեր ըրած գործերը բոլորն ալ հրապարակն են. դուք ոչ միայն գաղտնի չէք գործեր, այլ ընդհակառակը եթէ միայն զէնք մը միայն երկիր մտցնէք, կիւնք խոշոր տառերով կարճատեղէք ձեր թերթերուն մէջ, Ա. Ա. Ե. որ Պօլսոյ մէջ ձեր արհաւիրքները, և շուտով ազատուցուաւ, դուք բոլոր ամերիկայի մէջ թրք հերոս (1) քաղքէ քաղք կը պատրաստէք և խղճ ժողովրդի աչքին թող փչելով անոր քսակն ալ կը փորձէք պարպել, և դեռ ինչեր չըրիք: Երբ Գարեգին Չիթճեան Ամերիկայն պիտի մեկնէր, դուք եւ լաք Ամերիկական թերթերու մէջ ալ գրեցիք, մեկնելէն 15 օր առաջ թէ «Պ. Չիթճեան պիտի մեկնի արտասահման և հայ յեղափոխութեան մասին տեղեկագրեր պիտի տանի կովկաս եւ այլն»: Կա տխրահաշակ միութեան ատեն ձեր անտեղի գոռում գոչումները, օ՛ կատարած իմ, մարդ կապի, երբ կը մտարեք անդամ մը որ դուք չոր-ցամաք «կէցցէններով ու որոտումներով Սուլթանը իր գա-

հին վրայ ողջ ողջ կը մեռնէիք, և այնքան ալ յառաջ կերթայիք որ իբր Սուլթանի գահը ամբողջապէս փչրուած, դուք ձեր «Սանճաղի Շէրիֆը» կը ծածանեցնէք ձեր թերթերի թուն մէջ, և դեռ ըսե՛մ, դուք չէ՛ք որ վերջերս թղթէ «կարմիր նօթա» մը ներկայացուցիք եւրոպական դեսպաններուն, ու իբր խոշոր-շատ խոշոր-գործ մը կատարած էք ըսելով, հրապարակը գորդացուցիք, եւ շամչացաք ալ յոյնիսկ ելնել յայտարարել թէ պաւ աղբեցութիւն ըրած է եւ այլն»: Եթէ դուք միայն մազի չափ գործ ունենաք եւ վստահ եմ թէ իսկոյն զայն հրապարակ կը գնէք, որովհետեւ ձեր մէջ գործ շահագործելու ՍՈՎ կայ:

«Դուք կերբեք գաղտնապահութիւն ըսուած բանը դեռ չէք հասկցած, եթէ հասկցած ըլլայիք, վստահ եմ թէ այդպէս չպիտի խօսէիք»:

Մենք կը հակնանք, Միսո և Չիթճեան մը որ եղբարայական դաշտի զոհ գնացին, դուք ամիսներով շահագործեցիք անոնց դիակները, աստղերն ու լուսինն, կայծակն ու շանթերն կը գողնայիք և ամիսներով ձեր թերթին յիշել դարձուցիք, մինչդեռ անդին, տառապանքի երկրին մէջ, հարիւրաւորներ ինկան թշնամու գնդակին առջեւ, և այսօր ալ կ'ընան, բայց դուք անոնց մասին Ղուլտի արձանին պէս խուլ մնացիք, ու աւելորդ չի համարեցիք անոնց կիսատ թողուցած գործը շարունակողներու երեսին պոռայ շաղկապան խմբակի անանց մտնելու սակայն թէ այդ մակդիրը միայն ձեր ճակատն էր որ կը յարմարէր, եւ կը ըսեմ թէ դուք երկրին մէջ ու ե գործ չունիք ոչ ֆէլաոյի ունիք որ կ'ուրի բանուի ոչ զէնք և գործիչ որ ձեր քաղաքի մէջ: Մարտի կ'ուրի բանուցան ձեր ֆէլաոյները, և կաս ո՞ր լեռան, ո՞ր քաղաքի, ո՞ր ձորի մէջ ձեր քաղաքները, ու մենք չի լսեցինք, դուք զանկ եւ կամ ձեր 8-9 տարուան անգործութիւնը արդարացնելու համար է որ ժողովրդին կուզէք կլլեցնել թէ դուք

գաղտնի կը գործէք եւ այլն»: Այլ պարուն մենք զմեզ և կամ մեր անգործութիւնը արդարացնելու համար չէ. այլ որովհետեւ մենք իրօք գաղտնի կը գործենք» ըսաւ և վերջացուց իր խօսքը:

Սեղծ վեր. Հնչակեան. համոզուած է թէ իրենք գործ ունին, բայց գաղտնի է. և յանցանքը իրենք չէ. ինչ ընէ խեղճը, երբ անդին ետախաւորներու, շառլաթաններու ու հոստաններու լէգէն մը միշտ իրեն ակննդին կը կարող թէ անկէ գործ ունինք» բայց... գաղտնի է:

Թողունք որ այդ վեր. Հնչակեանը և կամ Հնչակեանները իրենց այդ մեծ յոյսովը միտնարուն ժամանակ մըն ալ, իսկ մենք երկու խօսքով Հոստանը թէ ինչո՞ւ համար այդ տօյանտըրճի խմբակի վարիչ կողմանները կը փորձեն ժողովրդին կլլեցնել թէ իրենք գործ ունին բայց գաղտնի է, այսինքն գաղտնի կը գործեն:

Շատ անգամներ այս էջերուն մէջ գրուած ու խօսուած է արդէն վեր. Հնչակեան կուսակցութեան, անոր կատարած գործերու մասին:

Այն օրէն երբ կը խարխուրեց Կոստանտնուպոլիս և Մարո խաթունի Լուստանի մէջ հաստատած գահը, և կամայուկ մը գիւսկները վար կատարուէր, հոս այս տօյաքներու երկրին մէջ կը հաստատուէր այս կուսակցութիւնը ու կ'սկսէր իր պիտաւորը գործունէութիւնը, սակայն այդ գործունէութիւնը ինքնին անհամապատասխան էր և կը մնար միայն ու միմիայն հոս Ամերիկայի մէջ:

Այս կէտը փաստելու և ապացուցանելու պէտքը չենք զգար բնաւ, վստահ ինքնին ապացուցուած է արդէն, ճիշդ է թէ ուրիշ հայաբնակ զաղութներէ ալ երբեմն երբեմն ձայներ կը լսուին, սակայն անոնք միայն կ'ալի մը շուր եւ ովկիանոսին վրայ: Անցեալ տարի Պոսթընի լեռնախայ «Հնչակ»-ին մէջ անգամ մը ընդհանուր նուիրատուութեան ցանկը հրատարակած էին, ամբողջ կովկասը տուած էր միայն եօթը տօյար—եթէ չենք սխալիւր—իսկ Ամերիկան 10—11

ՄԵԿ ՅԱՐԷՆ ՄԻՍԸ

(Ռուսական պատմաւեմ)

Արդէն սգազարդ եւ մտնկանոտ կայսերական յարկաբաժնին մէջ, հոգեւարք Աղէքսանտր Գ. ի մէկ նշանին վրայ բոլոր ներկայ եղողները դուրս ելնելու պարտաւորվելով, մէկ քանիները գացին իրենց ցաւակցութեան միտնկաններով բարձր ու գունաւոր պատուաններով գարդարուած փոքրիկ սրահը լեցել: Իսկ միսները ներքին տաճարի ստուերներուն եւ լուսութեան մէջ ինքնամոխուրի Միհակ վաղու ան կայսրը՝ Նիքօլա Մարիելիչը աչքի խորհրդաւոր քթթումով մը հայրական սնարին մօտ մնաց Աղէքսանդրի ճերմակ զէմքը կարկամած էր: Վանկերը կարող չունէր կը դանդաղէր ու կը տկարնար Միայն սա քանի մը բառերը կ'ըսուէր:

«... վերջապէս եթէ քո ներքին և արտաքին գործերու մէջ անկը բարգաւաճութիւններ... քանի մի անգուրի ազատներ ցցուին... եթէ միմիայն ինք իրենց որոշում մը տալու համար ինք զինքը շատ վրդոված զգաս... անոնց ուշացնելու մի վարանքը ա-

ն անձինն խորհրդակցութեան հրաւիրել այն անձը որ...»

Հանդիւն մը նախադասութեան վերջը կտրեց:

Աղէքսանդր պարտաւորեցաւ պահ մը հանգստանալ շարունակելէ առաջ, բայց իր վերջին բառերը Յարիելիչը տակն ու վրայ ըրած էին: Որո՞ւն կը սկնարկէր հայրը, Արահի վարագոյրներու ճեղքէն ապագայ միպետի թող նայածքը կը յանդէր ձեռնարկէրու, ազգականներու եւ մրտերի մննրու խումբերու վրայ:

«Ո՞վ էր այդ ճշմարիտ վստահութեան արժանի միակ անձը:

Անշուշտ կայսրուհին, այդ վեհաշուք մայրը, որուն խելացի աչքերը եւ քաղաքագէտի լուրջ դէմքը իր մանկութիւնը տպաւորած էին. կամ իր կի՞նը, իր երիտասարդ կիւնը վաղուան ցայուհին, այդ փոքրիկ ու գրաւիչ Հեսուսհին: Կատարեալ տանտիրին մը՝ որ կը պարծենար կերակուր եփելու գիտութիւնով եւ որ ինքը կը պատրաստէր խնձորի եւ տառեխի աղցանները. կամ մեծ դուքսերէն մէկը. հորեղբայրն էր, մօրեղբորդիները՝ աննկուն կռուական Սէ՛րժը, բանաստեղծ կոստանդինը՝ Վլաստիլը, Ալէքսան, Կիրիլը... այդ, գուցէ ատենցմէ մէկը,

բայց ամենէն աւելի ո՞րը, կամ գուցէ նաեւ այդ փառասէր եւ ուժեղ խմբակէն մէկը, որ տասը տարիէ ի վեր այնքան բարձր պաշտօններ կը վարէր, Բայց յանկարծ նայուածքի դարձուածքով մը Աղէքսանդր յայտնեց թէ կուզէր եւ կրնար դեռ խօսիլ:

Նիքօլա անոր չրթուէնքներու վրայ ծոնցաւ եւ սա բառերը լսեց: «Մեծ վտանգի մը ժամանակ... այն մարդը որ դու պարտաւոր ես հրաւիրել եւ գաղտնապէս հարցաքննել, այդ պատճառով Բ... էն է. բոլոր ինձ մօտեցողներէն նա միայն անվախ, յստակատեւ եւ առաքելի անկեղծութեան մը ապացոյցը տուաւ... քեզ շատ քիչ բան պիտի ըսէ... բայց այդ ճշմարտութիւնը ինքը պիտի ըլլայ. եւ դու խոհեմութեամբ վարուած պիտի ըլլաս այդ խորհուրդներուն համակերպելով»:

Լող չրթուէնքներուն վրայ կեանքը կամաց-կամաց կը մարէր. Նիկոլայի կարկամած դէմքէն հասկնալով որ խօսակցութիւնը վերջացած էր, երկու կայսրուհիները, ազգականները եւ մտերիները մօտեցան, ու մանք աղօթելով, օմանք լալով... Հետեւող թաղման դանդաղ հանդէսներուն, սուգի ձէսերուն եւ աւելի ուշ թագազրութեան արարողութիւն

ներուն ժամանակ Նիքօլա՝ հազարու մէկ մտահոգութիւններուն մէջ, ներքին անձնութեամբ մը միտքը պահեց հայրական վերջին խօսքերը:

Շատ քիչ կը ճանչնար այդ պատճառներ... ինչ, որ անցեալին մէջ շատ քիչ ժամանակ պալատին շնորհները վայելած էր: Աղէքսանդրի իշխանութեան սկիզբներուն յանկարծ շնորհազրկութիւնը զայն հարուածած էր. ամէն բան կորսուած էր. վարկ, պաշտօն տրտղոս, եւ դեռ լաւ էր որ զինքը Անդրպաշայի իրաւաններէն մէկը չէին զրկած:

Առանց ծանօթ պատճառի զրկուած, նշանակութիւնէն ինկած, պատճառ շատ փոքրիկ պաշտօնի մը Մօսկուայի Օուսթեյնայա պալատի պահապանի պաշտօնին մէջ գրուած էր, որորմու թեան նման ամսականով մը:

Նիքօլա չէր կրնար յստակօրէն ըմբռնել թէ Աղէքսանդր զայն իր պալատէն արտաքսելէն եւ զայն հրաւէր նորէն շնորհի չը կանչելէն յետոյ ինչպէս միակ հաւատարիմը եւ վրստանութեան արժանի անձ մը կը նկատէր: Բայց եւ այնպէս հարցը անմիջական կարեւորութիւն մը չունէր, որովհետեւ նոր իշխանութեան առաջին տարիները հանդարտ կերեւէին. օճերները կը ցանցադէն, ֆրանսա-

հազար սոյաբ :

Եւ որովհետեւ իրենց ունեցած շունեցածը ինչպէս րսինք միայն հոս Ամերիկայի մէջ է . ընտանիք է որ իրենք հակառակին յեղափոխական ամէն ձեռնարկի . ու իրենք զիրենք արդարացնելու համար կը փորձեն ցոյց տալ հայ հասարակութեան թէ իրենք «գաղտնի կը գործեն», բայց այդպէսով չեն կրնար ձեռք հասցնել . վասն զի իբրեւ կուսակցութիւն մը իր գոյութեան օրէն մինչեւ այժմ ունէ զանաք ըրած չէ յեղ. գործ մը կատարելու . այդ կուսակցութիւնը գործ չունի արդէն որ գաղտնի ըլլայ :


Վերջերս տառապանքը աշխարհէն Վ. . . Էն ուղղակի հոս եկող յեղափոխական գիտնորի մը երբ կը հարցնէի թէ «ձեր կողմերն ալ կը գրտաւորն վեր. Հնչակեաններ» կը պատասխանէր ինձի . «Վեր կողմերը կուսակցութիւններ չըկան . այլ կայ ազգային յեղափոխական կազմակերպութիւն մը Հայ. Յեղ. Ինչնակցութիւն անուանով, իսկ գաղով Վերակ. Հնչակեան կուսակցութեան այդ անունը ես հոս Ամերիկայի մէջ է որ բնած չեմ հասկնալ :

Պ. Վարդան ալ ալ արդէն շատ զեղեցիկ կերպով հաստատած էր «Շարժումի մէջ շարժմանը առաջ թէ Վերակազմակերպութեան գաղտնի գործունէութիւնը ամենախայտառակ ստատ է և աւելցուցած թէ «վերակազմակերպութեան ձեռքը ամենապարտաւորութիւնն էր հազարաւոր մղաններով, հետեւ հետեւ փախչող մարդ» :

Եւ մեր Վերակ. Հնչակեան հանրոճանօթ հակայեղափոխական ողորմելիները, անշուշտ դարձեալ պիտի կրկնեն իրենց սերտած ու սեփնական արհեստ ըրած յանկերգը թէ ամենք գաղտնի կը գործենք :


Երուանդ-Նարոս

Նեշուէ-Ամերիկա



### ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

ՅԵՂԻՍ ՓՈՐՈՒՅՅԻ ՀԻՉ. ՄԱՍՆԱԾԻՐՈՒՄ



«Շարժումի 699 թիւին մէջ եզրույնութիւն վերնագրով յայտարարութիւն մը կարգացրինք Ֆիլիպի Հնչ. Մասնաճիւղէն . իբր հակահարուած միւսնոյն թերթի 694էն սկսեալ յաջորդաբար մի քանի թիւերի մէջ իմ տուած ծանուցմանս . որ կերպեայ թէ իրենց շիջերը գրգռեր է : Կուզեմ որ հրապարակու պատասխանեն թէ իմ տուած յայտարարութիւնս կեղծ էր, չիւժո՞ւ էր միթէ վաւերականութիւնէ կամ թէ ինձի այդպէս ընկու իրագործութեանը արուած էր, թէ չէ : Յետոյ կուզեմ ինձի իմացնեն թէ ի՞նչ բանէ զրգուած այս տեսակ պաշտօնական յայտարարութեան պէտքը տեսեր են, և ինչ կը նշանակէ Հնչակ. մասնաճիւղերը գրուածներ որ մեր ներկայացուցած հասցին ունէ պատճառական թղթակցութիւն չի կատարեն : Այդ անիմաստ և անտեղի յայտարարութեանը Ֆիլիպի Հնչ. Մասնաճիւղը նենգամտութիւնը ունի Հնչ. Մասնաճիւղերն զգուշացնելու Երիտասարդ Հայաստան շարժաթիւրի ըստանալէ կամ գայն կարգալէ : Կուզեմ զիտնալ վերջապէս թէ՛ զգուշացուցիչ յայտարարութեան այս օրինակ ձեւը որո՞նք զէ՛մ յղացուած է, եւ կամ որո՞նք զէ՛մ սնուցած հակառակութեան ծնունդ է, թերթին թէ ինձ հանդէպ, վասն զի մարդ ազատի միտք ունենալու է կամ թէ իրապէս նենգամտ շար որ Շարժումի մէջ տպուած յետագայ սողող խեղաթիւրելու և անոնց մէջէն Հնչակ. ունէ Մասնաճիւղի հետ յարաբերութեան մտնելու իմաստ մը, բառ մը հանելու համար :

Եւ ան թէ ինչ գրեր ենք մեր ծանուցման մէջ :

«Պատճառ հրատարակուող Երիտասարդ Հայաստան շարժաթիւրը զիւրուրեանք ստանալ ուղղող Պուլկարիոյ և Ռուժմանիոյ Հնչակ. Մասնաճիւղերը ու ընկերները իրենց որոշ


հասցեներով պէտք է զիտնեն հետեւեալ հասցէին :

Մենք ներկայիս մէջ չպիտի իմացնենք թէ ի՞նչ իրաւար այս տեսակ ծանուցում մը տուած ենք . ապագային կը վերապահեմ այս մասին գրել : Միայն Ֆիլիպի Հնչ. Մասնաճիւղի խիստ անպարտաւոր զերին մէջ մանող մեր խելօքիկ Իտալիա արարակներէն կը պահանջեմ որ հրապարակու ապացուցանեն թէ Երիտասարդ Հայաստան շարժաթիւրը ըստանալ փափագողներուն ի դիտութիւն վերոյիշեալ յայտարարութիւնն ընկու ես իրաւունք ունիմ թէ չունիմ : Յետոյ կը հարցնեմ նոյնպէս թէ Պուլկարիայէն կամ Ռուժմանիայէն Հնչակ ընկեր կամ մասնաճիւղ մը Երիտասարդ Հայաստան թերթին օրինակ մը իրենցմէ ուղած ատեն պիտի կարողանայ Ֆիլիպի Հնչակեան Մասնաճիւղը այդ փափագիլն գոհացում առնու, ու կուտ թերթը գրիչելով Հիմա մենք կուսանք որ Ֆիլիպի Հնչ. Մասնաճիւղը մեր թուած հարցմանը պատասխանէ եթէ չուզեր որ մենք ապացուցանենք թէ պաշտօնական հանգամանք ունեցող մարմին մը, իբր լուրջ ու որոշ գործունէութիւնը մէկ կողմ նետած անձնական գծում վեճերով կը զբաղուի : Կինցած վեճեր կը բերեն, և թագուն կիրքեր կը հետախուզեն :

Կը կրկնեմ որ եթէ մեր այս հարցումներն անպատասխան մնան մենք պիտի նըրախարհենք ի՞նչ հակառակութեան ողբով սողողութեան Ֆիլիպի Հնչ. Մասնաճիւղը Շարժումի մէջ ըզգուշացուցիչ յայտարարութեանց զիտնելէ առաջ Ամերիկայի գիտած դարձեալ պաշտօնական և անկէ անյաղող բարոյական անմարտելի ակտակ եղող պատասխան մը ստացած ըլլալու է :

X. X. X.

Ֆիլիպի 25 մարտ



### ՌՈՒՍ ՄԱՐՈՒԼԸ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՆՅԱՅՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Նոյնի վրէժիքս» թերթի զինուորական քննադատ Վրոնսկիյ, կը յայտարարէ որ «Ռուսիոյ ին վալիտ թերթին գնահատումը ամենէն ճիշդն է ներկայ անալիզու թեան» այսինքն «տղիտու թեան» ու կը շարունակէ :

Որպէս զի պարզ կերպով տեսնանք թէ մեր առջեւը որչափ կարեւոր խնդիր մը կը գտնուի, չը պէտք է մտնանք որ ժամանակակից զօրքերը «ազգային» են, և որովհետեւ անոնք կը կազմեն բնակչութեան մեծամասն տարրէն, ստոր համար իբրեւ հայելի կը հանգիտանան ցեղային արժանիքներու և թերութեանց : Երկուցիցերու երկու զօրքանակներու միջեւ եղած կոտորած մէջ ներկայիս մեծ դեր կը կատարէ ամէն մէկ զինուորին անհատական կարգացումը : Մեր պատերազմներուն ամենաթեթեւ ու սուսմասիբութեան մէջ կը տեսնանք որ այդ կէտին մէջ շատ զանգաղ կը յառաջադիմենք : Հիմա Վրոնսկիյն որ փաղուց անտի կը թագաւորէ ժողովրդին բոլոր խանրուն մէջ, բուն դրած է ի՞նչ զինուորական և թէ՛ ծովային վարչութեանց մէջ :

Էպանչիւնի վերջին աշխատութեան մէջ որ կը խօսի 1828—29 թուականի պատերազմի մասին, կը նկատուին ուշագրաւ տղերք, ուր հեղինակը կը նկատէ կրթութեան պակասութիւնը նաեւ հրամանատարներուն մէջ : Այդ ատենուան սպայակոյտին պետք 1821 կը գրէ իշխան Վոլկոսկիի որոյ պարտնենքուն տղիտութիւնը սարսափելի է :

Անշուշտ իրերը դարձեալ չպիտի փոխին . կուզեմ սակայն յուսալ թէ այն անզգայ եւ անտուածային իբրեւ մէկ տեսակը՝ որ ցարձ է՝ պիտի փոխարկուի մարդկային ժողովրդի մը, որ աչքեր եւ ականջներ ունենայ տեսնելու եւ լսելու համար :

—Ինչեթ մը, մտածեմ Նիքոլայ արդէն ապահոված եւ գրեթէ ներդրած :

Երկու ժամ յետոյ պատու տր բ... սահմանէն դուրս զրկուած էր :

Բայց կերելի թէ նորին մեծութիւնը՝ մեծ գուքս Ալեքի օղբ ցընցած օրը՝ գործերու շարունակութիւնը, բնատիքէն կուրս չեկալու եւ իջ մեծ գուքսին անցնելը որոյնչէս առաջ վարանեցաւ եւ լրջօրէն ու երազուն կեպով արտասանեց անոր անունը :

Բ. տը Ալեքի-Քոուս թարգ. Հրուէս Բարից :

կան փոխառութիւնը կը կազմակերպուէր, երկար ժամանակէ ի վեր մոռնացող եւ փոթորիկող անհուն Ռուսիան կամենալալած եւ ընկճուած քանալ կը թուէր : Մայր թագուհին եւ ամուսին թագուհին լաւ զէմք մը կը ցուցնէին : Մեծ դուքսերը երջանիկ էին ծիսակ միապետը շողաբոր խնամակալութեամբ մը շրջապատելով :

Բայց յանկարծ ամէն բան ճարճատեց . յայտնի նշաններէ որոնց մէջ ամենէն բացայայտը ինձմար, ամբարտաւան եւ զրգոխ Գերմանիայի գիրքն էր . Նիքոլայ կրցաւ հասկնալ թէ իրմէն խոչոր վտանգներ կը ծածկէին : Իր մեղքիսագէտ Ֆիլիպի գուշակութիւնները չէին կրնար խուլ անձկութիւնը հանդարտեցնել . իր իբրեններու խորհրդաւոր ժպիտը զինքը ալիւս չէր ապահովցներ, Իրամական անձկութիւններու, գաղթային կործանումներու, ժողովրդական ճգնաժամներու մտայն տեսիլքը ունեցաւ... այն ժամանակ է որ սեռնող հոր պատուէրը ժիպքը ինկաւ : Որոչնչ պատու թ...ին գաղտնի ունկնդրութեան հրաւիրել :

Այս վերջինս պալատ եկաւ . եւ ան միջապէս Նիքոլայ գայն ընդունած ժամանակ նախ զգաց թէ այդ թէ-

պէտ ցամաք եւ մղալը՝ բայց հուժկու եւ զեղեցիկ ծերունին այնպիսի բաներ պիտի ըզէր, որոնք զինքը պիտի նեղէին . եւ արդարեւ հազար թէ օրուան զեղբերու մասին հարցաքննուած, պատու տր բ... հանդարտութիւն պատասխանեց :

—Իմ կարմիր-հրապարակի թանգարանին մէջ պղնձեայ արկղիկ մը կայ, որը Մոսկուայի նախկին Զարեհու ժամանակ ամէն առաւօտ Փրէմիլ պալատին մէկ պատուհանէն վար կիկնցնէին, եւ որուն մէջ ամէն մարդ ով որ ալ ըլլար կրնար իր ըստարգրած խնդիրը կամ բողոքը դրնել : Միայն Կայսրը այդ տուփին բանալին ունէր . միակ կը բանար եւ միակ ալ կը կարգար . լաւ սովորութիւն մըն էր այդ : Այն ժամանակի ցարկերը աւելի անզուժ էին զէպի իշխանները եւ պոյարները, բայց աւելի բարի զէպի ժողովուրդը : Ուրիշ բան մը՝ Ներկայ գահի շուրջը բազմաթիւ եւ անօթի ընտանիք մը կայ, Ամէն բան մեծ գուքսերու ձեռքէն կանցնի, որոնք այն ամենէն ինչ որ միայն իրենց ձեռքով կատարելի մեծակ բաժին մը կը վերցնեն :

Իրենց գործառնութիւններու համար ունեցած ճաշակը կառավարութիւնը պարտքի տակ կը ձգէ եւ ձեր

պիտեճէն կը պօստեցնէ այն բոլորը ինչ որ կրնար հանրային կեանքը բարելաւել, Պէտք է դաշտանագործը ընել մեծ գուքսերը, աքսորել եւ անոնց փոխարինել ընտրուած ժողովրդական ներկայացուցիչներով... պէտք է...

Պատուր կանգ առաւ Միպակտի խիստ աչքերուն մէջ կարդալով որ ակելորդ էր շարունակել . պարզպէս վերակաւ ուրիշ շեշտով մը :

—Չար, այնքան խորհրդատուներուն մէջ միայն ես քու հորդ այսպէս խօսելու համար էր որ անցեային մէջ շնորհագործի եզայ : Անտարակոյս իր մտնուած ժամուն աւելի յստակ է տեսած եւ զիս յիշած է . անոր խորհուրդովն է, չէ՛, որ զիս կանչեցիր . բայց կը տեսնեմ որ զարձակ զիս չը հասկնալու համար է իշխանութեան բովանդակ հարտութեան մէջ : Գինէ ալ պիտի յետ մղելիմ ինչպէս անկէ՛ եւ գուցէ աւելի խտորէն . սակայն ինչ որ ալ ըլլայ զեռ շատ տարիներ պարելու ուժը կը գաւ : Ինչ անալ պիտի ձգես այս աշխարհը... գուցէ՛ : Այն ժամանակ քո անարին վրայ պիտի հսկէ գաւակ մը, որուն յանկարծ յստակատես դարձած՝ պիտի կրկնես այս բոլորը :

Ուրիշ զօրավար մը հետեւեալը կրտսէ «գրեթէ սպայ շունինք» եթէ անպէտքները նեանք, անոնց տեղը ոչ ոք կայ Վաշտերը կը վարեն բայց ոչ իրենց և ոչ զինուորներուն պարտականութիւնները գիտեն:

Սեպտեմբերի պատերազմի ատեն 1853—56 թուականին, զօրավար մը կը գրէ. այս պատերազմին մէջ մեր զինուորները յաճախ իրենց պարտականութիւնը կատարեցին, կանգնեցան և մեռան. կընէին այն ինչ որ իրենց սորվեցուցած էին խաղաղ ժամանակ. բայց «սորվեցուցած չէին այն, ինչ որ պէտք էր»: Ուրիշ զօրավար մը կը գրէ — այդ պատերազմի փաստերը՝ ցոյց տուին որ ի զուր մեր ժամանակը կորսնցուցած ենք, մեր զինուորները մեքենայական կատարելագործութեան հասցնելու համար, որ կռուին հետ ընդհանուր կապէր բոլորովին չունին:

Ու այսպէս թուելով Վրոնսկիյ կը վերջացնէ հետեւեւեալ խօսքերով:

«Մեր բազմէն այդ բոլոր պատերազմներուն մէջ ուր մենք միշտ ետ մնացած ենք, համեմատաբար օժան պրծած ենք, որը և արգիլած է մեզ մեր անյաջողութիւններուն իրական պատճառներուն վրայ ճշգրիտ համոզում կազմել:

«Մինչև ճարտի հետ կռուի բռնուիլը, մենք անոր պէս ուժեղ թշնամու մը հանդիպած չենք մեր ընդհանուր տգիտութիւնը որը անցեալ կռիւններու մէջ այսչափ սուր կերպով աչքի չէր պարկած, հիմա մեզի շատ գէշ ծառայութիւն մատուց:

Ներկայ պատերազմներուն մէջ պատերազմող ամեն անդամի վարձացումը ամենէն անհրաժեշտ է. մենք հիմա ատկէ զուրկ ըլլալու շատ կը տուժենք:

«Միայն ուժեղ ժողովուրդը կրնայ ունենալ ուժեղ զօրք. բայց մենք արդեօք ուժեղ ենք. մեր պաշտօնական վերաբերումովը դէպի ամեն մէկ գործ, ատ ալ թող ամեն ռուս որոշէ»:

Ա Ձ Դ

«ԳՈՂԹԱՆ» ԵՐԳ. ԽՈՒՄԵՐԻ ՆԱԿԱՍՏ ՍՈՍՆՈՅ ՍՐԿԱԾԵԱԼՆԵՐՈՒ ՄՈՒՆԻ ՆԵՐԿԱՅՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԿՆԵՐԻ ԳՈՐԿՆԵՐԻ ԵՎ ՈՂԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՊԱՏՐԻԱՐԿ ԿՕՐ ԵՎ ԳՈՐԿՆԵՐԻ ՎՃԱՌԱԿԱՆԻ ՄԸ ԶԵՆՈՒՄԸ ԻՐ ՆԱԿԱՍՏԻՆ ՀԱՍՑՐԵՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Խուճախ վերոյիշեալ հասոյթէն 0/0 20ը առած չէ:

Վարչութիւն ԳՈՂԹԱՆ ԵՐԳ. ԽՈՒՄԵՐԻ

Տիրախմբար

Կը խնդրեմք որ ձեր պատ. թերթի յառաջիկայ թիւի մէջ հրատարակէք Հայկական Ընթերցարանի ինպատ ներկայացման հետեւեալ համառօտ հաշիւը:

Մարտի 28ին Վէշէրնա Բօշթաթերթին կը հաղորդեն որ նախարարացեալ Բաշօ Իէթրով հոն հասած է և խօսակցութեան մը մէջ յայտնած է որ իշխան Պէթրոնանտ Հոմ պիտի երթայ, ու իր ցանկութեամբ պաշտօնական ընդունելութիւն չը պիտի ըլլայ:

Ստեփան Բ. Ք. Արապեան 0. Օհանեան

Քուտ հասոյթը 369 — Խորին շնորհակալութիւն կը յայտնենք Վառնայի հայ հասարակութեան որ ընթերցարանի նման հաստատութեան մը օգուտը գնահատեց և նպաստեց անոր:

Ի դիմաց վարչութեան Ատենադպիր Ատենապետ Յ. Ք. Արապեան 0. Օհանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտ 28ին Վէշէրնա Բօշթաթերթին կը հաղորդեն որ նախարարացեալ Բաշօ Իէթրով հոն հասած է և խօսակցութեան մը մէջ յայտնած է որ իշխան Պէթրոնանտ Հոմ պիտի երթայ, ու իր ցանկութեամբ պաշտօնական ընդունելութիւն չը պիտի ըլլայ:

Ատկէ վերջ իշխանը Բաշօյ մէջ ճամբորդութիւն մը պիտի ընէ և վերջը վերադառնալ Պուկարիա:

Նախարարացեալը կը հերքէ նախարարական տագնապի լուրերը, նաև անհամաձայնութեան: Կառավարութիւնը փոխառութեան մասին երբէք մտածած չէ, թէև Պուկարական արժէթուղթերը բարձր գին ունին:

Իշխանը եւրոպական արքունիները այցելելէն յետոյ եկած է այն եզրակացութեան, որ Եւրոպան շատ կը գնահատէ Պուկարիոյ բռնած դիրքը ներկայ պայմաններուն մէջ:

Հանստուօնի յայտարարութիւնները Մակեդոնիոյ մէջ խաղաղութիւնը պահպանելու յոյսերը կը ուժեղցնեն, որովհետեւ բնակչութիւնը կսկսի հաւատալ թէ Եւրոպան իր ճակատագրով կը հետաքրքրուի:

Պուկարիան պիտի շարունակէ խաղաղ մնալ, զօրեղացնելով իր պատերազմական պատրաստութիւնը որ կը խոստանայ քարե. յաճօխ հետեւանքներ ունենալ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Կը կարծուի որ Սելանիքի մէջ յոյները պուկարական կոտորած պիտի սարքեն, զինուորական իշխանութիւնը հակառակ օստիկանութեան անտարբերութեան միջոցներ ձեռք առած է արգելք հանդիսանալու համար:

— Թրքական երկու նաւեր որոնք զինուոր կը տանէին Եթէմէն, Սուէզի շրանցքէն շն կրցած անցնել, որոշեալ տուրքը վճարելու դրամ չունենալուն համար:

— Ռուս և Աւստրիական կառավարութիւնները համաձայնած են որ Եւրոպական միւս մեծ պետութիւններն ալ հսկեն Մակեդոնիոյ ելեւտական բարենորոգմանց վրայ:

— Թուրք սահմանադիր զինուորները Ֆիլիպիի նահանգը մը տեր և չորս պուկար երիտասարդներ բռնելով տարեր են իրենց սահմանը: Պատճառը գեոյայտնի չէ:

— Սուլթանական իրատէնով մը օտարականներուն կարգիլուի հընադիտական խուզարկութիւններ ընել և Թուրքիոյ մէջ երկրային ուսումնասիրութիւններ կատարել:

— Ֆլանսայի հետ ունենալիք փոխառութեան խնդիրը լմնցած է: Թուրք կառավարութիւնը փոխառած ստակէն քսան միլիոնի միայն պատերազմական զանազան իւրութեւ և ծովային թնգանութեւ պիտի պատուիրէ:

Ի Ո Ւ Ս Ի Ա

Պատերազմին պայմանները ուսումնասիրելու համար նշանակուած յանձնախումբը արգէն ցըրուած է. կառավարութիւնը հաստատ որոշած է պատերազմը շարունակել:

— Մօսկուայէ Տէյլը Եքսքրէս թերթին կը հաղորդեն որ սպանուած դուքս Սերգիյ 535 միլիոն ֆրանքի հարստութիւն մը թողուցեր է:

— Ինթերսպուրկէն Բարիզեան թերթի մը կը հաղորդեն որ տիկնոջ մը տունը խուզարկուած ատեն ձերբակալուեր են քանի մը ռուս յեղափոխականներ և գըտնուեր պայթուցիկ նիւթեր ու ռուսեր, որոնց մին նշանակուած է եղբի մայր կայսրուհուն համար:

— Գիտութեան ճեմարանի խորհուրդը որուն նախագահը մեծ իշխան Կոնստանտինն է, միաձայն որոշում կայացուցեր է գիծել նախարարական խորհրդին որ մամուլի ազատութիւնը ճնշող բոլոր օրէնքները վերացուն:

ՅՐԱՆՍՍ

Փրանսական թերթերը կը հաղորդեն որ հասարակապետութեան դէմ նոր դաւադրութիւն մը բացուեր է: Գանի մը թերթեր այդ խնդրոյն այնքան կարեւորութիւն չեն տար:

Ի Տ Ա Լ Ի Ա

Կառավարութիւնը վախճալով որ Կրէտէի Ապստամբութիւնը մեծ ծաւալ պիտի առնէ հրամայած է որ քանի մը զրահաւորներ պատրաստ կենան Սուտա մեկնելու համար:

ԻՌԻՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ԳԱՏԵՐԱԶՄ

Սինկպուրէն կը հեռագրեն թէ ամիրալ Բօտտէնսկիին նաւատորմիցը, որ 45 նաւերէ կը բաղկանայ նկատուեր է այդ կողմերը:

«Մաթէն» կը հաղորդէ որ ռուս նաւատորմիցը կանգ պիտի առնէ Ֆորմոզա և Բէսկատորէս կղզիներուն միջեւ:

Մօտ օրերս ծովային ճակատամարտ կապատուի:

Մարտ 24ին Լիւնսի յառաջապահները փոքրիկ ընդհարում ունեցեր են ճարտն պահակազօրքերու հետ:

— Մարտ 26ին Բեթերսպուրկէն «Թրայմա» կը հաղորդեն որ ըստ վերջին պաշտօնական տեղեկութեանց ձարոնացիք կը յառաջանան երկաթուղիի ուղղութեամբ: Օքուր զօրաբանակը ձախ կողմը կը բռնէ, Նոտլուինը և Նօգիինը կեդրոնը, իսկ Բաւալուրայինը ալ թեւը: ձառնական զօրքի թիւը 475000 է:

— Մարտ 27ին Նիւ. Եօրքէն Լօնտօն կը հաղորդեն որ Քարոնիան 500000 հրացանի կոթեր պատուիրեր է Եօվ նահանգին մէջ:

ՄՐԱՎՍՍԵՏԻՆԵՆԻԷ

ԳՈՂԹԱՆ ԵՐԳ. ԽՈՒՄԵՐԻ ՎԱՂԸ. ՀԻՆՉՋԱԲԻԻ ԳԻՉԵՐ ԻՆԱՍՏ ՎԱՌՆԱՅԻ ԱԿԿ. ՎԱՐՃԱՐԱՆԻ ՊԵՏՊԱՏ ՍԱՆԿԵՐՈՒ ԵՎ ՍԱՆՏԻՏԻՆԵՐՈՒ ԱՊԻՏԻ ՆԵՐԿԱՅՈՒՄԸ:

ՇԹԹԵ ԱԷԼԱԼԵՏՏԻԷ Թատերախաղ և արարուած

ԵՐԳ, ՆՈՒԱԳ, ԵՒ ՍՈՂՕ

Կը յուսանք որ Վառնայի հայ հասարակութիւնը այս անգամ ալ չպիտի զլանայ իր փոքրիկ նուէրներով ու բախտներով աղքատիկ սաները և սանտիտները զատկուայ ուրախ օրերուն:

Վարչութիւն ԳՈՂԹԱՆ ԵՐԳ. ԽՈՒՄԵՐԻ Վառնայի

ОТГОВОРНИЕЪ

Мурадъ-Ераносянъ